Հայաստանում Կանաչ Լաբորատորիա – 2019

Երիտասարդները «կանաչ» օրակարգի առաջատարներ

Համայնքների զարգացման գաղափարներին և «Կանաչ օրակարգ»-ին ուղված պահանջները

Գործողություններ՝ համայնքային կամ տեղական մակարդակում

- ✓ Ազդեցության մասշտաբը՝ համայնքի մակարդակով
- ✓ Ազդեցության շրջանակը՝ ավելի լայն լայն, ներառյալ՝ շրջակա միջավայրը, սոցիալական և տնտեսական ասպեկտները
- ✓ Ընդլայնվելու և կրկնօրինակման կարողությունը՝ բարձր
- ✓ Իրագործելիությունն ու գործնականությունը՝ բարձր
- ✓ Առաջնահերթությունը՝ բարձր
- ✓ Մասնակցային որոշումների կայացման գործընթաց. շահագրգիռ կողմերի հայտնաբերում, շահագրգիռ կողմերի ներգրավման և իրենցից անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու մեթոդաբանությունը:

Քաղաքականություն՝ տեղական մակարդակում

- ✓ Տեղական մակարդակում կառավարման մարմինների դերակատարության ուժեղացում (տեղական որոշումների կայացում, ազգային ֆոնդեր մուտք գործելու հնարավորություն, ներառյալ՝ ծրագրեր մշակելու համար քաղհասարակության կարողությունների օգտագործում, լավագույն փորձի ներգրավում և այլն):
- ✓ Տեղական քաղաքականությունը պետք է արտացոլված լինի տեղական/համայնքային գործողությունների ծրագրերում կամ կանոնակարգերում (օրինակ՝ գործողությունների պլան էներգետիկայի վերաբերյալ, թափոնների կառավարման պլան և այլն: Տեղական մակարդակում գործող քաղաքականությունները պետք է արտացոլեն ազգային օրենսդրությունը):
- ✓ Քաղաքացիների մասնակցության ընդլայնում (քաղաքացիական հասարակության մասնակցություն, տեղական ինքնակառավարման մարմինների և քաղհասարակության համագործակցություն, համապատասխան գործիքների օգտագործում, օրինակ՝ (հանրային) միջնորդությունների մասին օրենք, ՇՄԱԳ-ի/ռազմավարական բնապահպանական գնահատման գործընթացներ և այլն):

Քաղաքականություն՝ ազգային մակարդակում

- ✓ Ներկայացված խնդիրը պետք է ունենա ազգային նշանակություն (կապել տեղական մակարդակում կատարվող գործողությունները/մշակվող քաղաքականությունները ավելի մեծ ազգային խնդիրների հետ, օրինակ՝ ծառատունկը կապել ազգային անտառային քաղաքականության հետ): Կապել

կառավարության գործողությունների ծրագրերի և ռազմավարական ուղղությունների կամ այլ մեգա-նպատակների հետ, օրինակ՝ ջրի կամ թափոնների կառավարման հարցերը անկախ դրանց տեղական նշանակությունից դրանք պետք է նաև դիտարկել երկրի մակարդակով՝ խնդրին տալով համընդհանուր լուծում:

- ✓ Հայտնաբերել և ակտիվացնել գոյություն ունեցող դաշինքները և ցանցերը (կապել դրանք ազգային ներկայացուցիչների հետ, մասնակցել ՇՄԱԳ-ի/ ռազմավարական բնապահպանական գնահատման գործընթացներին, մոբիլիզացնել քաղհասարակության այլ ներկայացուցիչներին, աշխատել լրատվամիջոցների հետ, խնդիրները հասցնել ավելի մեծ քաղաքական քննարկումների մակարդակի, և այլն):